ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 0287-Ա

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023թ-ի օգոստոսի «28»-ին ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի և ԱՎԳՈՄԵ ՇԻՆ ՍՊԸ-ի միջև կնքվել է ապրանքների ձեռքբերման պայմանագիր: Այնուհետև ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո հոկտեմբերի 30-ին կնքվել է համաձայնագիր, որով ուժի մեջ է մտել ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/6-6 ծածկագրով գնման պայմանագիրը: Քանի որ սահմանված ժամկետում մատակարարումները չեն կատարվել պատվիրատուն որոշում է կայացրել միակողմանի ամբողջությամբ լուծել ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/6-6 ծածկագրով գնման պայմանագիրը և մասնակցին հնարավորություն տալ վճարել պայմանագրի և որակավորման ապահովումները, սակայն սահմանված ժամկետում մասնակցի կողմից վճարում չի կատարվել, ուստի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քանի որ ի հայտ են եկել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության դրույթներով նախատեսված հիմքերը՝ **«խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չիվճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը»**, ուստի անհրաժեշտ է «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08428952, հասցեն՝ Ք. Գավառ Գեդեոն Միքայելյան տուն 69) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Օրենքով սահմանված կարգով սույն որոշումը ներկայացնել լիազորված մարմին և մասնակցին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. փետրվարի 20
ք. Արմավիր